

ՔԱՂԱՔԱՆ Ք
Տարեկան գինն է. Պոլսոյ համար 8 ՄԷԸ.
Վաւառաց 10 ՄԷԸ.
Վեղապետացի Պոլսոյ 4 ՄԷԸ.
Վաւառաց 3 ՄԷԸ.
Իւրաքանչիւր թերթի գինն 60 փրյ.
Յանուարի ամիսը մէկ անգամի հաւաքած 3 զուրուշ, երկու անգամի հաւաքած 2 զուրուշ, աւելի անգամներու հաւաքած զատ աւելարկութիւն կը լրացայ:



ՔԱՂԱՔԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՆ Ք
Գուրդազարդ լրագրաց հասցի. ծախքը թմբադրուելէան վրայ է. Լրագրոյ վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն թմբադրուելու համար պիտի ուղղուի, Կ. Պոլս. լրագր. օրինակի խան, Մասիսի գրասենեակը:
Համարը ծախքը կ'ընթացէ 500 ծախքը չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հետագիրը լուր բերած էր անցեալ շաբթու թէ Եւրոպայի հասարակաց կարծիքը Ռուսիոյ կառավարութեան կողմէ հրատարակուած ծանուցագրով մ'ընդառնուած է:

Սովորական ծանուցով եկած լուրերը լրովին կը բացատրեն այս լուրը: Եւրոպացի բնակիչները իրարմէ կ'աշտօնական Մէսսօրի լրագրին հրատարակած մէկ յօդուածն է, որ իրօք պաշտօնական ծանուցագրի ձեւ մ'ունի, և ըրած յայտարարութիւնները կարեւորութենէ զուրկ չեն:

Ահաւասիկ յիշեալ յօդուածը. «Պալքանի թերակղզւոյն մէջ անցած կարի որ անցքերն առանձին չ'ընդունին զՌուսիա, այլ առանց որ և է գաղտնի դիտման կամ անձնասէր աշխարհավարութեան Եւրոպայի խաղաղութիւնն անվրդով պահելու համար ուրիշ երկու պետութեանց հետ դաշնակցութեամբ միացեալ է: Ուրիշ ամեն տէրութիւնք ալ, որք անկեղծաբար խաղաղութեան հաստատ պահուելուն կը բաղձան, ազատ են այն դաշնակցութեան յարիլ:

«Սակայն Ռուսիա՝ այդ դաշնակցութեան չ'ընդունալ Սլավ քրիստոնէից վրայ ունեցած համակրութիւնը, թուրքիոյ հարստահարեալ Սլավ ժողովրդեան համար Ռուսաց ազգին ըրած զոհողութիւններն այնչափ մեծ են որ իւր համակրութիւնն համայն Եւրոպայի առջև ցուցնելու իրաւունք ունի:

«Տեսնելով այն մեծ վտանգն՝ որ Սերվիոյ և Գարատաղի կուռի խառնուելէն պիտի ծագէր թէ՛ յիշեալ իշխանութեանց և թէ՛ թուրքիոյ համար, Ռուսիա ամենէն առաջ ձայնը բարձրացուց ի պաշտպանութիւն գ. ժ. բաղդ. Հէրսէքցոյ, որք հարստահարութեան և չափազանց տուրքերէ յետին վիճակի հասնելով ի զէն դիմելու ստիպուած են: Ռուսիա Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ հետ համաձայնութեամբ, թուրքիոյ մէջ որ և է կողմէ միջամտութեան առաջին անգամ համար՝ հրաւիրեց զթուրքիա որ իրաւախօս ըլլայ ապաստամբաց հետ: Գաղղիա Անգղիա և Իտալիա ալ ուժ տուին այս հրաւերին:

«Թուրքիա՝ Սլավ քրիստոնէից համար բարեբաւեան ընել խոստացաւ, Սովետան հրամանագիր մը հրատարակեց, որ քրիստոնէից և մահմետականաց իրաւանց հաւատարութիւն կը պատուիրէ և անոնց վիճակը կ'ամօքէ:

«Բայց որովհետեւ ասկէց առաջ ալ երաշխաւոր տէրութեանց ստիպ-

մամբ Սովետան կողմէ այս տեսակ որոշմունք հրատարակուած և յետոյ փորձով տեսնուած է որ չ'են բռնուած, և հետեւեալ այս տեսակ հրամանագրաց վրայ վստահութիւնը կորուսած է, կառավարութեանց պարտքն է այդ վստահութիւնը վերահաստատելու միջոց գտնել, առանց որոյ թուրքիա չ'ընար իւր միտքը դրած բարենորոգմունքն ի գործ դնել: Վերջապէս պէտք է որ թուրքիոյ քրիստոնէի ժողովրդոց տխուր վիճակը վերջ մ'ունենայ:

Ռուսիոյ պաշտօնական լրագրին այս խօսքերը շատ ծանրակշիւ են: Մէկ կողմէ միջամտութեանց առաջին անգամ խօսք կ'ընէ, բայց միւս կողմէ այնպիսի յայտարարութիւններ կ'աւելցնէ, որք Արեւելեան խնդիրը բանալու խորհուրդ կը ծածկեն իրենց մէջ:

Կերեկ թէ տէրութեանց և Բ. Դրան մէջ եղած բանակցութիւններն ալ փափուկ կերպարանք մ'աւանդեն այս օրերս, և ասոր հաւանաբար մէկ նշանը կը համարուի արտաքին գործոց նախարարին փափուկութիւնը, ինչպէս որ Լէվիթ Հէրլըտ լրագրին երեքշաբթի առաւր թուոյն մէջ հրատարակուած հետեւեալ տողերէն ալ կը հասկցուի:

«Բաշխ փաշային վերստին արտաքին գործոց նախարար անուանին՝ որչափ զիպող նոյնչափ և կարեւոր իրողութիւն մ'է:

«Սակայն թէ փաշան աշխատութեան և նոր հիւանդութեան մը տկարացած, թուրքիոյ ներկայ աշխարհավարական կիճիւններուն չէր կըրնար պէտք եղածին չափ կուրծք տալ: Ոչ միայն օտար կառավարութեանց հետ յարաբերութիւններն ըստ ինքեան խրթին են, այլ և Հէրսէքի ապստամբութեան պատճառաւ ներքին և արտաքին աշխարհավարութիւնք այն կերպով հիւստուած են իրարու հետ, որ խիստ գ. ժ. բարին է լուծել:

«Եթէ Անգղիոյ անմիջամտական աշխարհավարութիւնն ամենէն ալ ընդունուած ըլլար, այն ժամանակ ներքին և արտաքին աշխարհավարութիւնք դիւրաւ կրնային բաժնուիլ իրարմէ: Բայց երեք տէրութեանց բռնած դիրքն, որք Արեւելեան—Եւրոպայի վտարանջեալ ազգութեանց բաղդն և Արեւելեան խնդրոյն լուծուելէ ձեռնընկն առած են, ցոյց կուտայ թէ խնդիրն աւելի կ'ընճառոտելու քան թէ պարզելու միտք ունին: Աւստրիա, որ ապստամբութեան աշխարհավարական բնութիւն մ'ստանալուն զխառն որ պատճառն է, օտար միջամտութեան զատ ուրիշ միջոցաւ խաղաղութեան արգելք ըլլալու կը ներկրար, որպէս զի այս կերպիւ Սլավից երախտագիտութիւնը չ'աճի, և

միանգամայն համադէ զանոնք թէ թուրքիա իւր գործերը վարելու անկարող է:

«Իրաց այսպիսի վիճակի մը մէջ Ռուսիոյ դիւանագիտութեան բռնած դիրքը խիստ ճարտար է. վստահ զի մինչդեռ Աւստրիա՝ Ռուսական աշխարհավարութեան գործը կը կատարէ և իւր հին գաղտնիքն օր քան զօր կը հեռանայ, Ռուսիա հանդարտ նստած՝ բարեկամ կը ձեռնայ Բ. Դրան և նորա վստահութիւնը գրաւել կը ջանայ: Թուրքիոյ հիւսիսային արեւմտեան գաւառաց խաղաղմանը մասին օտարի միջամտութեան վրայ չ'աշխարհող կը ձայնակոյն Անգղիոյ հետ թէ թուրքիա կարող է իւր գտնուած գ. ժ. բարութեանց յաղթել: Բայց թէ և Ռուսիա ուղղակի միջամտութիւն չ'արարէր, Բեդրապուրի պաշտօնական լրագիրը կարծիք կը յայտնէ թէ Հէրսէքի խաղաղացման հիմընք ուսմանուած բարենորոգմանց գործադրութեան համար տէրութիւնք օժանդակելու են թուրքիոյ: Հետեւեալ բեդրապուրի կառավարութիւնը դուռը բաց կը թողու, որպէս զի թուրքիոյ մէջ իւր շահերն յառաջ տանելու համար ամեն անգամ որ միջամտութիւն մը հարկաւոր համարուի, կարող ըլլայ ընել:

«Այս պատճառներով Բաշխ փաշայի ժառանգած աշխարհավարական վիճակը վարդէ անկողին մը չէ: Բայց այս նորընտիր նախարարը վիճակի դեռեպանութեան միջոցին ընդ արձակ առիթ ունեցած է ինքիւն ուսումնասիրելու և երեք տէրութեանց շարժառիւթներն հասկնալու, որք փութաշան մասնակցութիւն մ'ունին գործին մէջ և որով ներկայ վիճակին կիճառաւորուն կը նպաստեն: Բաշխ փաշայի մտառակիք լուսն թշնամին օտար միջամտութիւնն է: Ամեն ջանք ի գործ պիտի դրուի աշխարհի հաւատացնելու և նոյն իսկ թուրքիոյ ալ ընդունել տալու թէ Գուրը չ'ընար օտարին օգնութեան անցնիլ: Եթէ չ'ընան ընդունել տալ զայս, օտար միջամտութիւնը ձգտեալ կերպարանքով ու այլ և այլ կեղծ ձեւերով պիտի ներկայանայ: Խորհուրդ կ'աւանդուի իրողութիւնը:

«Մեք գիտնալով որ Բաշխ փաշա ներկայ վիճակին պահանջմանց և գ. ժ. բարութեանց պատասխանելու կարող է, այս պատճառաւ իւր արտաքին գործոց նախարար անուանուելու դիմող և կարեւոր իրողութիւն մը կը համարենք:

Պէրիտէն Անգղիական թայմզ լրագրին թղթակցին հոկտ. 23 թղթով հետեւեալ լուրը կ'ուտայ.

«Սերվիայի նորահաս զէնք չ'ունին, ոչ ալ այն ամեն պէտք եւ

զաններն՝ առանց որոյ արդի դարաւանակ մը չ'ընար շարժիլ: Բայց 4—5 հազար կանոնաւոր զօրացուցն դէ մը գատ՝ կրնան 40—50000 անկանոն զօրք հանել:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սիւնիա 7 նոյ.

Կառավարչը զօրքով Բէրսը գնաց՝ Անգղիոյ դեսպանական գործակատար Պ. Պիրշէ սպաննողները պատժելու: Մարտի 9-ը զիմադրութեան կը պատրաստուին, և բոլոր Անգղիացիները Մարտի 9-ը օրնուի կ'ուզեն:

Վիէննա 8 նոյ.

Բուլղարի երկաթուղեաց բաժնէներէն գատ, որ կը վնասուին և կը բարձրանան, միւս արժեթղթոց երեսը վար է Պերլինի եկած անցալու լուրերուն պատճառաւ:

Բաշխ փաշան կայսեր վերադարձին կ'ապաւնէ, որ հինգ շաբթի օրը տեղի պիտի ունենայ, որպէս զի Ն. Կ. Վիստիսաուս թեան ներկայանայ, և յետոյ ճանաչուի:

Երկրի լրագրերը միաձայնութեամբ կը հաւանին Բաշխ փաշային արտաքին գործոց նախարար անուանուելու, և խիստ օգտակար կը համարին այս ընտրութիւնը թուրքիոյ ապագայ աշխարհավարութեան:

Բեդրապուրի 8 նոյ.

Կը հաւատեն թէ երեք կայսրութեանց դաշնակցութիւնը միշտ անայլայնի կը մնայ:

Սթէն 8 նոյ.

Ծանձնած ողովն տեղեկաբեր Պ. Քիւքարի կառավարչէ երեսփոխանութեան վերջին շրջանին մէջ քուէ արկեալ օրէնքներն ոչնչացնել, և Պալլարիսի նախարարութիւնը սահմանադրութեան բռնաբարձր պատասխանատու յայտարարել: Քիւքարիայի, Պատրարի և Մէսսիսայի առաջնորդ երեսփոխաններն՝ իրենց առաջնորդութիւնը կաշառելով ձեռք բերած ըլլալու ամբաստանութեան ներքեւ ինկած են:

Պերլին 8 նոյ.

Կայսրն երեսփոխանական ժողովոյ դիւաններուն նախագահներն ընդունելով յառաջիկայ շրջանին մէջ կատարուելիք գործերուն և ներկայ աշխարհավարական վիճակին վրայ խօսակցեցաւ: Խոստովի թագաւորին տուած այցելութեան աշխարհավարական նկատմամբ ունեցած կարեւորութիւնը հասկցուց, և Կերովսոյ վիճակին կատարելապէս խաղաղ ըլլալը շնորհ: Յետոյ Պոսնիոյ խնդրոյն նկատմամբ կարծեաց տարբերութիւն գտնուելուն և լուծման հասնելու գ. ժ. բարութիւններն երկարօրէն հասկցուց բայց միանգամայն խաղաղութեամբ կարգադրուելու մասին ունեցած կատարեալ վստահութիւնը յայտնեց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սթէն 8 նոյ. Յետի 9 Մէհմէտ Ալի փաշան հոկտեմբեր 27 թուով հետեւ

